

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիւրքով, նոյն պրօգրամայով և նոյն ուղղութիւնով: Մենք ստանում ենք սեփական ՀԱՌԱԳՐՈՒՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԷՆ ՍԿՍՂԱՅ Է:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը՝ 6 ռուբլի, ամսական՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բաղայնայա և Բարձրակայա փողոցների անկիւն):
Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Տեղեկութիւն թիւրքաց Հայաստանի մասին. Թիւրքաց զեապանի հերթումը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայերը միջին դարերում հարաւ-արեւմտեան Ռուսաստանում, Նամակ Գարաշիչազից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց Հայաստան և եւրոպական մամուլը. Քիւրդերի բարբարոսութիւնները Հայաստանում. Պապը և Ռուսաստանը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԱՌԱԳՐՈՒՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.— ՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կուսակցական պայքարը և գիտնական խաւարամիտները.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ (Հեռագրով)

Մեր թղթակիցը Պետերբուրգից հեռագրում է մեզ նոյնմբերի 17-ից հետեւեալը.
«Новое Время» լրագրից հաղորդում է, որ անգլիական «Daily Telegraph» լրագրից հրատարակում է Անգլիային ազատել թիւրքաց հայերին, որպէս Ռուսաստանը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ

ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ ԽԱՐԱՐԱՄԻՏՆԵՐ

Չանապան ազգերի կենտրոնի մեզ շատ լաւ յայտնի է, որ ոչ միայն հասարակ, այլևս պրօֆեսորները, այլ և նրանցից տասնապատիկ անկիւն ընդունակ գիտնականներ, տաղանդներ, չը նայելով իրանց ունեցած գիտութեան, յաճախ դարձեալ մնացել են յետադէմ, դարձեալ անընդունակ են դառնել հասկանալ ժամանակի թարմ հոսանքները, առաջադիմական շարժումները. ուստի պրօֆեսոր Սոյումն Նիխազարեանցի յետադիմութեամբ չնչոյ յօդուածը *) մեզ այնքան էլ օտարոտի չը թվաց:

Բայց խոստովանեցէք, որ հայ ընթերցողների մեծամասնութիւնը, չնորհիւ իր նահապետական միամիտ աշխարհայեցողութեան, պրօֆեսոր, գիտնական բաւերը և լայն, լուսաւոր հայեացքների տէր մարդ բաւերը համարել հասկացողութիւններ է համարում: Ահա այդ կարգի ընթերցողները, կարդալով Նիխազարեանցի յօդուածը (եթէ միայն կարդացել են), անշուշտ պէտք է հիասթափվեն, համոզվելով, որ կարելի է լինել պրօֆեսոր, ուսումնական, բայց

*) Այդ յօդուածը, որ կրում է «Հարկաւոր է մեր կենտրոնը բարձրել ընդհանուր և որոշ օրէնքներով», ի հարկ է ազդարարված է տխրահայտ Ա. շրջանի ջերմ պաշտպան «Արձագանքի» էջերում:

Թիւրքաց զեապանութիւնը. վերջիշեալ լրագրից, «Tems» լրագրից առնելով ասում է. «Թիւրքաց կառավարութեան կողմից Հայաստան ուղարկված քննիչ յանձնաժողովը բաղկացած է Աբդուլլա-փաշա և Տէվֆիկ-փաշա զեներալներից և ներքին գործերի մինիստրութեան երկու պաշտօնականներից:

«Նրէկ Պետերբուրգի «Русская Жизнь» լրագրի մի մեծ յօդուած նուիրեց այդ հարցին, մասնացոյց անելով այն հանգամանքի վրա, որ Թիւրքիան յամառութեամբ թող չէ տալիս քրիստոնէյ ազգերին՝ հոգ տանելու պաշտպանել իրանց հաւատակցներին մահմեդականների դադանութիւններից: Անգլիան առաջարկեց, Սաուդի անցքերը քննելու համար, մի միջազգային մասնաժողով կամ անգլիական գործակալ ուղարկել Հայաստան թիւրքերի հետ միասին: Բ. Գուլը մերժեց Անգլիայի այդ առաջարկութիւնը:

ԹԻՒՐԿԱՅ ԴԵՍՊՈՒՆԻ ՀԵՐԲՈՒՄԸ

«Մշակի» անցեալ համարում մենք տըրպազրեցինք Պետերբուրգի թիւրքաց զեապանի հերթումը Սաուդի վերջին գէպի մասին:

Թիւրքաց զեապանները և հիւպատոսները վերջին տարիները սովորութիւն են արել հերթումներ տալիս Թիւրքիայում կատարվող զանազան գէպերի մասին պատուիր լուրերի առիթով: Այդ հերթումները մինչև այժմ մի ընդհանուր յատկութիւն են ունեցել.— այն է, անդադար կրկնել, թէ Թիւրքիայում կենտրոն խաղաղ է և անդադար, թէ ժողովուրդը երջանիկ է և զոհ իր վիճակից, և թէ վերջապէս այդ բոլոր նկարագրութիւնները սուտ են և հնարովի...

Կարելիով այդ հերթումները մարդ մի հարց է իրան տալիս, թէ արդեօք ո՞ւմ համար են հրատարակվում այդ հերթում-

ների ակնոցներով.— նա խոսն է ծնում Կոստանաններին, Մանդինաններին, վարդանանցներին, նա հետեւելով մեր փողոցային թերթերի ասածներին, Ներսիսեան զգրոցի հոգաբարձութեան ընտրութիւնը անուանում է շահանսն ամբոյի խալաթաւ գործ է այն և այն:

Նրա խաւարամիտները, տեսնելով որ պէտք է զրկվեն իրանց ամենամասնաշեղի բերդից.— Ներսիսեան զգրոցից, յաջողեցին բնական տալ մի շարք ընտրութիւններ, բայց դարձեալ ստույգ պարտութիւն կրեցին, նրանց ներքի էր ընտրութեան պայքարի կատաղի ժամանակ, չարաչար անաշուղտութիւնների վրէժը գէթ առնել Թիֆլիսի ժողովուրդից, անբարեխղճաբար նկարագրելով նրան, որպէս հարեցողներ, վարձկաններ և այլն. բայց երբ մի և նոյնը թուծակի նման կրկնում է ընտրութիւններից հետո ապրող մի մարդ է այն էլ պրօֆեսոր.— այդ նրան պատիւ չէ ինքում, մի հանգամանք, որ մի և նոյն ժամանակ ապացուցատար է: Եթէ յօդուածագիր Նիխազարեանցը խոստովանվելով, որ չէզոք մարդ է, հակասում է իրան, խոսելով որպէս խաւարամիտների ամենաթունոյ պաշտպան, էլ ինչպէս կարող ենք չը կասկածել պարոնի անկեղծութիւնը և այն ժամանակ, երբ նա ասում է. «Իմ մտքերը լրջում են համոզմունքից» և ոչ թէ մի այլ աղբիւրից. մահաւոր որ, ինչպէս ասում են, հայ պրօֆեսոր մի ժամանակ եղել է «Մշակի» և Գրիգոր Արծրունու թունոյ համակողմնակից...

Այժմ տեսնեք, թէ ինչու են կայանում պրօֆեսոր Նիխազարեանցի համոզմունքից, թէ մի այլ աղբիւրից ըզլաղ յետադիմութիւնը, խաւարամիտութիւնը:

ներքին հերթի համար հայերը իրանք լաւ գիտեն իրանց զրուծիւնը. եթէ եւրոպական պետութիւնների համար՝ դրանք իրանց զեապանների միջոցով գիտեն, թէ ինչ է կատարվում Թիւրքիայի ներքին, հայաբնակ գաւառներում: Եթէ եւրոպական կարծիքի համար.— ապագրդին աշխատանք է: Հետաքրքրական է, թէ ինչպէս է թիւրքաց զեապանը լուսաբանում Սաուդի կոտորածը:

«Հայ աւագանները, ասում է զեապանը, գիտաւորված արտասահմանից ստացած գէներոյ, միացան քիւրդ ապստամբների հետ՝ աւագանութիւններ կառարկելու համար, այրեցին և քարոքեանք արին այդ տեղերում գտնված մահմեդական զիւղերը...»

Հայ աւագաններ, քիւրդ ապստամբներ... Ո՞ւմ դէմ և ի՞նչ բանի համար են քիւրդները ապստամբվել և ի՞նչ գործ ունեն նրանց հետ հայ աւագանները: Ուրեմն այս անգամ հերթման համար հարկաւոր եղաւ, որ հայ աւագաններ էլ աշխարհ գան և աւերեն զիւղերը...

Եւ այդ ի՞նչ զիւղեր են, որ նրանք քարոքեանք են արել Թիւրքաց զեապանը ասում է, որ մահմեդական զիւղեր են: Գուցէ զեապանը չը գիտէ, որ Սաուդի միջ թիւրքական զիւղեր չը կան, որ մահմեդական տարրը այնտեղ բաղկացած է միայն քիւրդներից: Ուրեմն գուրս է զալիս, որ քիւրդները ապստամբվել են քիւրդների դէմ և կոտորում են քիւրդներին, իսկ հայերն էլ օգնում են, որ քիւրդը կոտորի քիւրդին և աւերի քիւրդական զիւղերը:

Այսքան էլ անհեթեթութիւն... Գեապանի հերթումը այս անգամ մի բան գտնէ չէ հերթում, այն է, որ Թիւրքիայում կատարվել են արտակարգ ընդհարումներ, ուրեմն ո՞ր մնացին այն խօսքերը, թէ Թիւրքիայում ամեն բան խաղաղ զրուծեան միջ է: Ուրեմն ճիշդ է, որ այդ երկրում աւագանների ամբողջ խմբը

Այսօր հայ հասարակութիւնը իր բոլոր գաղափարներով բաժանված է երկու մեծ կուսակցութիւնների.— առաջադիմականների և խաւարամիտների: Գրիգոր Արծրունին, մեր այդ մեծ հրապարակախօսը, այն կարծիքի էր, որ կուսակցութիւնների գոյութիւնը հայերիս մէջ վերին աստիճանի ուրախալի մի երևոյթ է: Խաւարամիտները, ընդհակառակն, պնդում են, որ կուսակցական պայքարը զարգացած ազգերում թէև օգտակար, բայց մեր մէջ վերին աստիճանի վնասակար է:

Ինչպէս յայտնի է, մեր խաւարամիտները մի հին երգ ունեն. զրաքը աննախնայների սովորութիւն են արել վնասակար գտնել մեզանում այն ամենը, ինչ որ հէնց իրանց ասելով օգտակար, զովելի է զարգացած երկրներում: Այդպէս, խղճի ազատութիւնը, կրօնական համբերողութիւնը և եւրոպայում օգտակար է, իսկ մեզանում վնասակար. ապա հարգանք ընդունված է զարգացած ազգերում, բայց մեզ մօտ այդ մասին մտածելն անգամ վտանգաւոր է, արեւմտեան ազգերը մեր շարք դարձել են, ինչ միջնադարեան անպակասութիւն են դարձել վանքերը, անդաճ մոռացութեան մասնելով նրանց, մեզանում պէտք է վանքերը վերականգնեցնել, մեզանում վանքերը պէտք է լայն, զիտութիւն տարածեն. քաղաքակրթված երկրներում հասարակական պակասութիւնները անխնայ հրապարակ են հանվում, կաշառակեր և պարտադանք միմիտները, ակնաւոր պարլամենտական դործիչները, հանձարեղ ճարտարագետները դատի են կանչվում և պատմվում, բանտ նստում (յիշեցէք Պանամայի գործը), իսկ մեզ մօտ հասարակական պակասութիւնները պէտք է ծածկել, թաղցնել, կաշառակեր Գէմիլիանցիների քաղաքութիւնը:

կան, աւերվում են բազմաթիւ զիւղեր, մարդիկ այրվում են, սպանվում, կոտորվում, որ նոյն իսկ քիւրդը ապստամբվում է, և այլն և այլն:

Բայց մենք մեր կողմից մի հարց կը տանք. եթէ բոլորը այնպէս է կատարվել, ինչպէս զեպանն է ասում, եթէ հայերն են մեղաւոր, և ոչ կառավարութիւնը, եթէ վերջապէս ամեն բան կարգին է, ինչու թիւրքերն արդեւ է լինում, որ քննիչ յանձնաժողով ուղարկվի զաւանդները՝ տեղի ու տեղը ուսումնասիրելու երկրի դրութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ ՀԱՐԱՒԱՐՆԵՐՆԵՐՆԵՐԻ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Կիւլում, «Նեստոր պատմագրի պատմական ընկերութեան» նոյեմբերի 6-ին կայացած նիստում կարդացվեց ի. Լինիչենկոյի հետեւեալ գեղեցիկը. «Общественная роль армян в прошломъ юго-западной Руси»:

Ինչպէս երեւում է այդ գեղեցիկագրից, հայերը դեռ միջին դարերում ոչ միայն ծանօթ էին հաւաքաւարներուն Ռուսաստանին, այլ և նրա հասարակական կեանքում աչքի ընկնող զեր էին կատարում Պ Լինիչենկոյ այդ գեղեցիկագրի մէջ աշխատել է ի մի ժողովել իրան յայտնի տեղեկութիւնները այդ ժամանակվայ հայերի մասին:

«Եթէ հարաւային Ռուսաստանի կենտրոններէն մի քանիսը, — գրում է նա, — աջողել էին միջին դարերում հասնել մեծ հոշակի և հարստութեան, դրանով զխառնարանը նրանք պարտական էին հայերին — արեւելից եկած այդ չափազանց ժիր, եռանդուն և դործունեայ ազգին, որը կատարում էր զլիսաւոր միջնորդի դեր արեւելի և արեւմուտքի տնտեսական յարաբերութիւնների մէջ»:

Գեղեցիկագիրը ի միջի այլոց բերում է Լեւոնի XVII-րդ դարու տարեգիր Եան Ալմաթկիի հետեւեալ կարծիքը մի և նոյն այդ հայերի մասին. «Երկուստայնեանը աշխարհը են և անվերջ, հասակաւորները՝ խեղճիւր և ճշմարտ, ծերերը՝ բարեհաճ և հիւրընկալ, օրիորդները՝ թխաղէմ և կայտառ, տիկիները՝ հասարակասէր, թէ և ծերաւորացի՝ խիստ թուսնալից»:

«Ուրիշները, — գրում է ի. Լինիչենկոյ, — համարում են միջնադարեան հայերին այնպիսի խոշոր շրջանառու առեւտրականներ, որոնց նմաններին հազիւ թէ աշխարհի մի օր և է ուրիշ տեղ գտնել: Ռուսաստանում և Լեհաստանում այնքան էին ընտելացել նախկին հայերի վրա, իբրեւ արեւելեան ապրանքների առեւտրականների վրա, որ նոյն

իսկ մի ամբողջ շարք այդպիսի առեւտրականներ կրում էին «հայկական» անունը. այդպէս էին անուանվում զանազան գորգերը, զանազան ոսկեթել գործածածները, զէնքերը, անուշահոտ խզեր, թանկեղէն քարեր և այլն, որոնք բերվում էին արեւելից: Բայց հայերը ոչ միայն կատարում էին միջնորդ-առեւտրականների դեր, այլ և յայտնի էին իբրեւ ինքնուրոյն վարպետներ. Լեւոնի ոսկեթելիչները հոշակը պահպանվում էր զլիսաւորացի հայերի ջանքերով»:

«Հայերը յայտնի էին և իրանց աներկիւղութեամբ: Հարաւային Ռուսաստանի քաղաքների պաշարման ժամանակ, նրանք, օգտվելով արեւելեան լեռների զիտութեամբ, հաջնվելով թուրքերի կամ տաճիկների նման, յանձն էին առնում ամենամիտանալու պատերազմական զիտողութիւններ կատարել»:

«Միջին դարերում հայերը յայտնի էին և իբրեւ շատ փորձառու քաղաքագէտներ: Եւ այդ հանգամանքից օգտվում էին ոչ միայն լեհական թագաւորները, այլ և զերմանական կայսրերը՝ իրանց զիտութեամբական յարաբերութիւնների ժամանակ արեւելի նկատ 1623 թ.ին հայ խրիստոսոֆ Սերբելիցովի պաշտօնագրէս հիւպատոս էր նշանակված թիւրքերի հայտնում Հայերը քաղաքագէտների դեր էին կատարում շատ անգամ ինքնուրոյն կերպով, և այդպիսով կարողանում էին մեծ օգուտներ վերցնել»:

«Սլոլպս գործում էին մասնաւոր Մոլդավիայում, ուր ինչպէս յայտնի է, շատ յաճախ էին տեղի ունենում քաղաքական խռովութիւնները և ուր զրեթէ ամեն տարի փոխվում էին երկրի կառավարիչները: Հայերը առաջադրում էին իրանց թեմապետներին, մեծ գումարների միջոցով պաշտօնապետում էին նրանց, խնայողներ էին լարում այդ առիթով, և դործը աջողվելուց՝ մեծ օգուտներ էին շահում»:

«Պէտք է նկատել, որ Լինիչենկոյ, նկարագրելով միջին դարու հայերին զանազան ասպարէզների վրա, աշխատում է որքան կարելի է անկողմնապաշտ փոքր իր կազմած կոմպլիմենտային մէջ նա չէ մտցնում այն նեղ, միակողմանի, մեծամիտ-արհամարական տեսնելներն, որով սիրում են տուգորել իրանց դրոսածները զանազան սահմանափակ խնայողի տէր մարդիկ, զէպի ուրիշ ազգութիւնները: Եւ այդ գիծը, պէտք է խոստովանել, գեղեցիկագրի զլիսաւոր արժանաւորութիւններից մէկն է»:

ՆԱՄԱԿ ԴԱՐԱՉԻՉԱԳԻՅՑ

Հոկտեմբերի 30-ին
Շուտով կը լրանայ տասն տարին այն օրից, երբ

Երեւոյկա աւանում հիմնվեց ուսաց տարրական դպրոցը, որտեղ սովորում են 40—50 աշակերտներ: Այժմ, ինչպէս լուր է հնք, մտադրութիւն կայ այդ ուսումնարանը Երեւոյկա մայրական գիւղից տեղափոխել Ներքին-Ախտա, որտեղ, ինչպէս արդիւնաւէտ լինել, քան թէ Երեւոյկայում: Մի-միայն Ներքին Ախտան, հայ և ուս հասարակութիւնը միասին, կարող է տալ առնուազն 100 աշակերտներ, որոնք տարիների ընթացքում կամ գիւղական դասնադաս դրագիրների և տիւրացուների մօտ են կարգում և կամ մնում են բոլորովին աւելում և անկիրթ...:

Այս շրջանի Ալափարս գիւղի եկեղեցին կրում է ս. Վարդան անունը, որը հիմնված է հինգերորդ դարու հերոս քաջ Վարդան զորավարի յիշատակին: Այս օրերս ս. Վարդանի ուխտի օրը լինելով՝ զանազան գաւառներից հաղաբար ուխտաւորներ՝ ծեր, երիտասարդ, կին և երիւնայ, հարս ու աղջիկ՝ լցվել էին այդ գիւղը:

Աւելորդ չի լինի յիշել և այն, որ նոյն իսկ քրդերը և քրդահայերը ջերմեռանդ արտով մասնակցում են հայկական այդ ուխտագնացութեան: Նրանք իրանց մատաղացու ոչխարը, այծը, ուր և այլն՝ իրանց ուսերի վրա դրած՝ հայ ուխտաւորների հետ միասին շտապում են դէպի ս. Վարդանի դուռը և այդտեղ իրանց զոհ մատուցանում քաջ Վարդանի յիշատակին:

Այդ քրդերը ծիսական տեսակէտից շատ մօտ են հայերին և հեշտութեամբ կարող են բացարձակ ընդունել քրիստոնէութիւն, եթէ մի փոքր արհամարհեն իւրայիններից կրած երկիւղը: Այս միջինում տարբերում մի քանի քրդեր լուսաւորչականութիւն ընդունեցին Նոր-Բայազետում:

Սուրբ Վարդանի ուխտի օրը յիշելով Ալափարս գիւղի եկեղեցին բաւական արդիւնք է ունենում: Սակայն այդ արդիւնքը, որ դոյնում է ուխտաւորների նուէրներից և աջահամբոյրից, իբր սեփականութիւն երբեք չէ մտնում յիշեալ եկեղեցու պէտքերը հողաւու համար: Այլ ամեն տարի այդ ուխտի օրը Լճիմաճի վանքի մի օր և է վանքական այդտեղ գալով և արդիւնքը հաւաքելով՝ իր հետ տանում է Լճիմաճի վանքը, մի մասը միայն թողնելով գիւղի եկեղեցուն: Այս տարի ժողովուրդը մի փոքր ընդլայնութիւն ցոյց տուց իրանց եկեղեցու անունով հաւաքված գումարը թոյլ չը տալու, որ տանեն և վանքի սեփականութիւն դարձնեն, քանի որ իրանց եկեղեցին առանց այն էլ շատ պէտքեր ունի և կարօտ է աւելի բարեկարգութեան...:

Գ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գլխար, նոյեմբերի 1-ին

Խոնարհաբար խնդրում եմ երկուողիս մի անկիւն հնորէն «Մշակի» մօտակայ համարներից մէկում:

Համաձայն կարգադրութեան հանգուցեալ Մարկար կաթողիկոսի, Լճիմաճի եմ ուղարկել Ներսիսեան դպրոցից ստացած վկայականս, բայց մինչև օրս յետ չեմ ստացել:

Գիմել եմ թէ խնդրով թէ պատասխանը վերադարձ հեռագրով Լճիմաճի ուսումնարանական — վարչական յանձնաժողովին, ոչ մի պատասխան չեմ ստացել: Գիմել եմ թիֆլիսի Գայեանեան դպրոցի հոգաբարձութեան երկու անգամ, ստացել եմ բացատրական պատասխան: Այժմ չը գիտեմ, ուր գիմել, արդեօք ի՞նչ է պատասխանատուն այդ մասին: Ուսումնարանական յանձնաժողովը, թէ նախկին թեմական տեսուչ Գեղամեանը, թէ այժմեան տեսուչ Մէլեանը, թէ վերջապէս Գայիսեան դպրոցի նախկին տեսուչի օր. Գալանթարեանը, որի միջոցով ուղարկել եմ վկայականս՝ Գայեանեան դպրոցում ուսուցիչ եղած ժամանակը:

Ահա այս անկ գրութիւնս է, որից ստիպված դիմում եմ խմբագրութեանդ՝ «Մշակի» մէջ մի անկիւն խնդրելով:

Հ. Մաթիսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 17-ին, ցերեկվայ մօտ ժամը 2-ին թիֆլիսում զգալի եղաւ երկրաշարժի հարուած, և տեղեւ աւելի քան 3 վայրկեան: Սկզբում հաւաքածոստիկ էր, որին յետեցին աւելի թոյլ մի քանի հարուածներ: Քաղաքի մի քանի մասերում այնքան զգալի էր հարուածը, որ ընտելիչները աներից դուրս վազեցին, երկնային սկիւնքին լաց լինել, իսկ մի քանի տներում՝ նոյն իսկ պատերը թոյլ կերպով ճեղքվել են: Երկրաշարժի հարուածները, ինչպէս երեւում է հեռագրական տեղեկութիւններից, զգալի են եղել և թիֆլիսի շրջակայ գիւղերում, Մանգլիս, Շուլավեր: Մի քանի տեղեր նոյն իսկ պատահանները ապակիները կոտորվել են:

Արդէն մամուլին յանձնեցինք Գրիգոր Արծրունու «Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը» գրութեանը և յոյս ունենք, որ առաջիկայ շաբաթ լոյս կը տեսնի:

Վիեննայից մայրաքաղաքի լրագիրներին հեռագրում են, որ Բ. Գուռը բռնում է այն բոլոր

թիւն ունի ոչ միայն գրականութեան մէջ, այլ և հասարակութեան վրա, ամենայնպէս զաւանդեալ, բայց որքան այդ ազդեցութիւնը ահազին է, այնքան էլ վնասակար, այնքան էլ վտանգաւոր է»:

Կարծում ենք, պարզ է, որ ամեն տեղ, ամեն ազգերում կեանքի թարմ հոսանքները, առաջադեմ շարժումները իրանց հակառակորդ են ունեցել ոչ միայն հասարակ, ազգային, այլ և գիտնական, տաղանդաւոր խաւարամիտներին... Եթէ աշխարհահայկա Տաղիւր քրիստոնէութիւնը ընդունեց լուսաւորչական վարդապետութիւնը, եթէ եւրոպական պրոֆեսորներից ոմանք հաւատացնում են, որ բարձրագոյն կրթութիւնը կանանց համար վտանգաւոր է, եթէ Բէլինսկու գործունէութիւնը Ակադեմիայի գտնում է «վնասակար», եթէ պէտք է դարձնաւ, որ հասարակ, անյայտ մի պրոֆեսոր, ինչպիսին է Եղիազարեանը, ապրելով հայրենիքից հեռու, չը շնչելով հայրենի երկրի օդը, չը զգալով այն ծանր և քաղցր տպաւորութիւնները, որ առաջ է բերում մեր կեանքը, չէ հասկանում իր երկրի թարմ հոսանքը, իր հայրենիքի կուսակցական խորհրդաւոր շարժումը, զրտնելով այդ ամենը վնասակար, վտանգաւոր:

Եւ այդպէս, լոկ պրոֆեսորութիւնը չէ կարող փայլ տալ Եղիազարեանի կարծիքներին: Կրկնում ենք, եղել են խաւարամիտ գիտնականներ, որոնք թիւն կարող է պատկանել, ինչպէս իբրեւ պատկանում է, հայ պրոֆեսորը:

Այժմ դառնալով պրոֆեսորի սեփական փաստաբանութեան:

(Կը շարունակվի)

ները հրապարակ չը հանել, որովհետեւ դրանով վայր է ընկնում մի մեծած կաթողիկոսի հեղինակութիւնը: Վերջապէս, բոլոր շատ թէ քիչ դարձած ազգերում կուսակցութիւնները առաջադրութեան ամենազգաւոր ֆակտորներն են, իսկ մեղ մօտ ազգակործան, վնասակար մի երեւոյթ և այլն, և այլն, և այլն: Ահա մեր խաւարամիտների փառած լոգիկան, փառած դատողութիւնը:

Պատկերը ամփոփելու համար պէտք է աւելացնել, որ մտածողութեան այդ անհիմն եղանակը յատուկ է բոլոր ազգերի խաւարամիտներին: Այդպէս, Ռուսաստանում ճորտութեան պաշտպան խաւարամիտները հաւատացնում էին, որ ուսուցիչները գեռ ախքան չէ դարձան, որ կարելի լինի, հետեւելով Եւրոպային, ազատութիւն տալ նրան: Ամերիկայի խաւարամիտ պաշտպանները, պաշտպանելով ստրկութիւնը, ապացուցանում էին, որ նեղները կենդանիներից ոչ չնչով չեն դանդաղում, որ անմտութիւն է նեղներին եւրոպացիների հետ համեմատել, ուստի միայն լեկոծ աղաւաղները, չանդարեւ միտները կարող են մտածել նրանց աղաւաղութիւն, մարդկային իրաւունքներ տալու մասին... Բարեբաղդաբար, խաւարամիտներին չէ տուած պատմութեան անիւր շուռ տալ, առաջադրութեան աղբիւրները դիմադրել. — ճորտութիւնը, ստրկութիւնը կարգում են տխուր անցեալի տխուր սեպհանութիւն, ի մեծ ցաւ «բարեմիտ» խաւարամիտներին...:

Եւ այդպէս, ընթերցող, թէ հայկական, թէ ռուսական, թէ ամերիկական և թէ այլ ազգերի խաւարամիտները միակերպ են մտածում. առաջադրութեան այդ թշնամիների ընդհանուր կար-

ծիքով, ինչ որ կարելի է, օգտակար է դարձացած ազգերում, նոյնը անկարելի է, վնասակար է իրանց հայրենիքում: Լաւ ճանաչելով խաւարամիտների մտածողութեան այդ փառած եղանակը, մենք արհամարհանքով և հեղեղութեամբ ենք վերաբերվել հայկական օրս կուրաւոր տնտեսի այն կարծիքին, թէ կուսակցութիւնները դարձացած ազգերում օգտաւէտ, իսկ մեր մէջ վնասակար են:

Բայց յանկարծ հրապարակ է դուրս գալիս մի պրոֆեսոր և գիտութեան անունով երդվելով, կրկնում մի և նոյնը, առիթով մեղ լրութեամբ ջրել մի կարծիք, որին մշտապէս վերաբերվել ենք ծաղրելով՝ հեղեղութեամբ Որովհետեւ պրոֆեսոր Եղիազարեանից կարծիքը ինքն ըստ ինքեան խաւարամիտների հին երգը լինելով, ունի այն առանձնայատկութիւնը, որ արտասանվում է պրոֆեսորի բերանից, ուստի մենք էլ մեր առաջին հարուածը պէտք է ուղղենք այդ հասցեով, պէտք է ցոյց տանք, որ լոկ պրոֆեսորութիւնը դործին չի օգնի. իսկ այդ նպատակով կը յիշատակենք մի շարք օրինակներ, որտեղից ընթերցողները կը տեսնեն, թէ ինչպէս հայ պրոֆեսորից անհրաժեշտ աւելի հեղինակաւոր պատկաններ, դարձնալ գիտութեան անունով երդվելով, վնասակար, վտանգաւոր են գտել իրանց ժամանակի այն թարմ հոսանքները, առաջադրական շարժումները, որոնց առաջ այդ գիտնականները յետնորդները խոնարհվել են:

Երբ քրիստոնէութիւնը նոր էր սկսվում տարածվել, երբ կուսակցութիւնը տիրում էր աշխարհին, ժամանակակից աշխարհահայկա ժողովուրդը մէկը — Տաղիւր հաւատացնում էր, որ նոր կրօնը, քրիստոնէութիւնը «ամենամաքաւոր» յակն մի վարդապետութիւն է, որին կարող են

հետեւել միայն ազգանքը, ամբողջ... Անցան դարեր և ժամանակը — այդ անկախա դատաւոր — պարզեց, որ աշխարհահայկա պատմաբանը կոր է եղել իր ժամանակի մեծ շարժումը ըմբռնելու հասկանալու...:

Թողնենք հին աշխարհը, դանք Եւրոպա, ուր գոյութիւն ունի առաջադրական մի մեծ հոսանք, կանանց խնդիր անունով: Դարուս ամենամեծ մտածողները, որոնց թուում և հոշակաւոր Միլըր, պահանջում են գեղեցիկ սեղան յատկացնել մարդկութեան միւս կէտին վերապահված բոլոր իրաւունքները, միջնադար պրոֆեսոր Բիւրնի, Բարնի, Բալա շախտաւորում են գիտնականութիւն սպառնացան, որ այդ իրաւունքները վտանգաւոր է կանանց տալ, որ նոյն իսկ բարձրագոյն կրթութիւնը կանանց համար վնասակար է... Անտղը կեանքը դարձնալ չէ լուր խաւարամիտ գիտնական Բալա շախտաւորների ազդեցութիւն, սոփիստութիւններին, այսօր Շվեյցարիան, Ֆրանսիան բաց են աւել իրանց համալսարանների դռները քնքոյն սեղան առաջ, իսկ վարդ կը բացեն նոր հոսանքին տակաւին գիմաղղող երկրները...:

Դառնալով Ռուսաստանին, ուր 40-ական թվականներին Բէլինսկին իր զինակիցներով առաջ բերեց առաջադրական մի զորեղ շարժում: Այսօր ոչ ուսուցիչ, լինի նա նոյն իսկ խաւարամիտ բանակի մարդ, չէ հպարտանում ռուսական այդ մեծ կրիթիկոսի անունով, չէ օգնորդում նրա գործունէութեամբ: Բայց անհէք, թէ ինչ կարծիք է ունեցել ժամանակակից մի տաղանդաւոր դրող Բէլինսկի մասին:

«Եւ շատ եմ շրջել Ռուսաստանի զանազան կողմերը, — ասում է Ակադեմիկը, — և եկայ այն եղրակացութեան, որ Բէլինսկին ահազին ազդեցու-

արտասան
Հայաստան
րի մասին

Թիֆլիս
թեան վա
րին մի
նի է, Հ
րուր ար
ստացաւ

Թիֆլի
«Kavkaz
թէ հիշ
առվարու
սուն՝ այ
նեւու հա
կելը գէ
թիւրքաց
րութիւն
պատժել
սում այդ
նում ենք

Ժողով
թիւնը,
նեւ է, ո
րը, տա
կարող
արվել ա

Այս օ
ձեռնու
նում վ
պատաս
հարկեր
գասակ

Թիֆլ
այս օր
որոնց վ
կովկաս
գէպեր

Մեղ
20-ին
ց եր ր

Մենք
տական
տեսել
կում է
նամուր
գին է
րունակ
ներ: Ա
նի, Մե
Լճովի,
կտորն
խական

Երկր
մինիս
թեմա
լրագր
յանձն
րը և
երը ն

Ս
նաւը
կող ձ
տաւոր
տակից

Երկր
տեղեկ
Ռուսա

Թիֆլ
Եր
քաց
Պայ
տեւա
զի ու
ունեն
մարտ

Ս
Թիֆլ

Եր
քաց
Պայ
տեւա
զի ու
ունեն
մարտ

Եր
քաց
Պայ
տեւա
զի ու
ունեն
մարտ

Եր
քաց
Պայ
տեւա
զի ու
ունեն
մարտ

արտասահմանեան լրագիրները, որոնք խոսում են Հայաստանում տեղի ունեցող անկարգութիւններին մասին:

Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան վարչութիւնը ուղարկեց Բուրժուազիայի պարտիան մի ցաւակցական հեռագիր: Ինչպէս յայտնի է, Հրատարակչական ընկերութիւնը հանձնարարութիւն տրուեց մի քանի տարի սրանից առաջ ստացաւ հազար բոլորի օժանդակութիւն:

Թիֆլիսի թիւրքաց հիւպատոսը պաշտօնական «KABEAG» լրագրում տպագրել է մի հերքում, թէ ճիշդ չէ այն լուրը, որ թիւրքաց բարձր կառավարութիւնը յանձնաժողով է ուղարկել Սասուն՝ այնտեղ պատահած սոսկալի դէպքերը քննելու համար: Այսի վատ ցանկաւորով ուղարկելը զէթ մի փոքրիկ ապացոյց կը լինէր, որ թիւրքաց կառավարութիւնը ուզում է հարստահարութիւններ տեսնել, և մեղաւորներին պատժել, բայց այժմ դուրս է գալիս, որ Կ. Պոլսում այդ մասին չեն էլ ուզում մտածել: Կըրքնում ենք՝ աւելի վատ:

Դադողիկական լուսաւորութեան միւստրուութիւնը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, յայտնի է, որ տարրական դպրոցների ուսուցչուհիները, տասն տարեկան անբոժ ժառանգութեան համար, կարող են, ինչպէս և ուսուցիչները, պարզեւտրվել արձաթէ մէղաներով:

Այս օրերս Թիֆլիսի պոլիցիայի տեսչի իր նախաձեռնութեամբ և հաւաքած փողերով բաց է աւանդում Վէրայում գիշերային ապաստարան, ուր ապաստան և տաք անկիւն կարող են գտնել հարկերից աւելի մարդիկ ամենապարզապէս բանորդասակարգից:

Թիֆլիսի Վիսարիոն տաճարի մակառոյ պատի վրա այս օրերս կայրված են մետաղեայ տախտակներ, որոնց վրա խոշոր տառերով արձանագրված են Կովկասի նախնական պատմութիւնից գլխաւոր դէպքերը:

Մեզ հեռագրում են Գանձակից, որ ամսիս 20-ին այնտեղ լինելու է Կարա-Մուրզայի կօնքի Երուս:

Մենք ստացանք «Музыка и Пѣніе» երաժշտական ամսագրի առաջին համարը, որ լայն է տեսել նոյնքան ամսին: Ամսագիրը պարունակում է իր մէջ հինգեր, խօսական երգեր, դաշնամուրի համար նոտաներ, բոսաններ Տարեկան գինն է հինգ ռուբլի: Իւրաքանչիւր տետրը պարունակում է իր մէջ մինչև 35 մեծագիր երեսներ: Առաջին համարում գետնոված են Բեթսիօլենի, Մենդելսոնի, Գիւլմանուայի, Գունտի, Լանգէլի, Լիօլի, Կադանկոյի, Բախի հեղինակութիւններից կտորներ: Մեծ տեղ է բռնում Բրաքայի «Վալսալսական աւանդութիւն» տաղը:

Երկրագործութեան և պետական կառավարների միւստրուութեան մէջ, Տիֆլիսի նախագահութեամբ, ինչպէս հեռագրում է «Нов. Обозр.», լրագրի Պետերբուրգի թղթակիցը, կազմվել է մի յանձնաժողով, որը պէտք է քննի այն խնդիրները և զեկուցումները, որ տրվել են միւստրութիւն, երբ նա Կովկաս էր եկել:

Սե Ժովում խորտակված «Վաղարշ» շոգե-նաւը 3,500 ռուբլով գնել է յայտնի ձեռնարկող Ֆելդման, որը, լրագիրների խօսքերով, դեռ տաւորութիւն ունի մաս մաս հանել Ժովի յատակից:

Երկրագործութեան միւստրութեան հաւաքած տեղեկութիւններին նայելով, 1894 թվի հունիսը Ռուսաստանում միջակից մի քիչ աւելի բարձր է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՆ

Եւրոպական մամուլը այժմ դադարում է Թիւրքաց Հայաստանում կատարվող անցքերով:

Պարիզի «Figaro» լրագրում Ժակ-Սէն-Սէր հետեւեալ յօդուածն է նուիրում Հայաստանում տեղի ունեցած թիւրքաց զաւաճութիւններին:

«Եթէ Գլաւատն իր նախկին ոյժերը և եռանդն ունենար և կարողանար ասպարէզ գալ նոյն մարտնչողի դերում, որպէս քսան տարի ա-

ռաջ, նա, անկասկած, օգուտ կը քաղէր այդ զեղեցիկ, թէպէտ և տխուր դէպքից, հայերին պաշտպանելու համար, որպէս նա պաշտպան հանդիսացաւ Բուրժուազիային, որը հեծում էր թիւրքաց լծի տակ և որին վերջը ազատեց Ռուսաստանը: Յիշելով Անգլիայի նախկին համարիւրութիւնը դէպի ճնշվածների և հալածվածների վիճակը, Լոնդոնի հայկական հայրենասիրական ընկերութիւնը այս անգամ ևս հարկաւոր համարեց բրիտանական կառավարութեան ուշադրութիւնը դարձնել այն սարսափելի բռնութիւնների վրա, որ կատարում են թիւրքերը փոքրասիական հայերի վերաբերմամբ: Վերոյիշեալ ընկերութիւնը ներկայացրեց անգլիական արտաքին գործերի մինիստր Լորդ Լէմէրէյթին մի շարք դժուարեաններ և փաստեր, որոնց բովանդակութիւնը ամօթ է բերում ամբողջ կրթված աշխարհին:

«Համակներում նկարագրված և անգլիական արտաքին գործերի մինիստրութեան ներկայացրած այդ տխուր անցքերը տեղի ունեցան Բիթլիսի և Մուշի մէջ, մի վայրերի և լեռնաւանդակների միջով, այդ լեռնաւանդակ, կատարվեց մի ողբալի դրամա. հայերի հաղորդած տեղեկութիւնները, եթէ չափազանցում էլ համարենք ներքին, նկարագրում են այնպիսի սարսափելի պատկերներ, որոնք ուղղակի անհնարին պէտք է թվային տանին: Դրանք դարի վերջում Կանանց և երեխաների արեւը, ի հարկէ կատարելապէս անպաշտպան, հոսում էին յորդ առունների ներքին: Կոտորածը շարունակվում էր երեք օր ու գիշեր, և այդ ժամանակ մի քանի թիւրք գլխորդներ, իրանց սեփական խոստովանութեան համաձայն, կարողանում էին օրական մօտ հարիւր հօգի սպանել, գլխաւորապէս կանանց և երեխաներին: Երեսուն գիւղերի ազգաբնակչութիւնը, որոնք մերժեցին ուրանալ զբիտոնեակն կոծը և մահմէդականութիւն ընդունել, ամբողջապէս ջնջվեց:

«Հաւատալ դժուար է այս տողերը կարդալով: Ներքին, որ այդ բոլորը իսկապէս տեղի է ունեցել, այն ինչ այժմ բոլոր կառավարները փարատված են, հայերի կոտորածի փաստը պաշտօնապէս խոստովանեց թիւրքաց կառավարութիւնն էլ, որը բացատրում է այդ տխուր երեւոյթը այն ատելութեամբ, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի քիւրդերի և հայերի մէջ: Իսկ վերջինները պնդում են այն բանի վրա, որ կանոնաւոր դրբեր ուղարկված էին այն պատճառով, որ քարուքանդ եղած հայերը անկարող էին վճարել իրանցից պահանջվող հարկերը:

«Սակայն յանձնաժողովը նշանակեց մանրամասն քննելու համար «հայկական անկարգութիւնները», որպէս պաշտօնապէս անուանվում է փոքր-Ասիայում տեղի ունեցած անցքը: Բացառապէս թիւրքաց պաշտօնականից կազմված յանձնաժողովը հազիւ թէ կատարելապէս անկողմնապահ վերաբերվի թիւրքաց առաջ լինէր, այդ անցքը անկասկած իր վրա կը դարձնէր հին Եւրոպայի ուղարկութիւնը, որովհետև հայրի դէմ թիւրքերի կատարած զաւաճութիւններին մէջ վիրաւորված է զինաւորապէս քրիստոնէական կոծը:

«Բայց այժմ նոյն հին Եւրոպան դադարում է ուրիշ հարցերով, և փոխանակ մի արշաւանք կազմելու, ինչպէս նա կանէր առաջվայ ժամանակը, նա բաւականաճառ է միմայն զեպումաւ, տիական յայտադրերով: Հետեւները այն կը լինի, որ թիւրքաց կառավարութիւնը չի յապաղի պաշտօնապէս հերքել ամեն տեսակ զաւաճութիւնները և ներկայացնել այդ անցքը որպէս մի դէպք, երբ կառավարութիւնը հարկաւորված էր զէնք գործ դնել ապստամբված հայերին ճնշելու համար: Դրանով էլ ամեն բան կը վերջանայ:

Սասունի զաւաճութիւնների վերաբերմամբ Բ. Դուռը ուղարկեց Եւրոպայի մայրաքաղաքները բոլոր թիւրքաց զեպանութիւններին բացատրութիւններ, նման «Մշակի» անցեալ համարում տպած Պետերբուրգի թիւրքաց զեպանի նամակին: Այդ բացատրութիւններին մէջ ասված է, որ ոչ թէ թիւրքաց գործերը արի անցրին Սասունի հայ աղ-բաքանկութիւնը, այլ հայ աւազակները և քիւրդերը անկարգութիւններ էին անում և այրում էին մահմեդական գիւղերը:

ԹԻՒՐԿԱՅ ԲԱՐՈՒՍԱՆԻ ԵՒ ԵՒՐՈՊԱՅԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՆ

Պարիզի «Temps» լրագիրը հաղորդում է Բիթլիսում տեղի ունեցած զաւաճութիւնների մասին:

Լուսանութիւնները, որ նա քաղել է անգլիական արտաքին գործերի մինիստր Կիմերլեյթին Լոնդոնի հայկական ընկերութեան կողմից ներկայացրած դժուարեաններից:

«Բիթլիսից բաղկացած աւազակախումբը, սեպտեմբերի վերջում, յարձակվեց հայկական գիւղերի վրա և յափշտակեց նրանց տաւարը: Հայերը հալածեցին աւազակներին, որի ժամանակ սպանվեցին երկու քիւրդեր և վիրաւորվեցին երեքը:

«Այդ ընդհարումը առիթ տուեց սարսափելի վրէժնորութեան: Բիթլիսի գործերը ուղարկվեցին: Թիւրքաց գործերի հրամանատար փաշան հրաման ստացաւ կատարելապէս ջնջել բոլոր հայերին: Զօրքերը սրի անցրին վեցից մինչև տասն հազար քրիստոնէաներին: Գաւառներից մէկում չորս հաւիրու Կանայք կտոր կտոր էին արված, ամենածանր վիրաւորանքներին և բռնաբարութիւններին ենթարկվեց յետոյ: Մանուկներին սուրների վրա էին նստացնում և այնպէս էին զլիններ կրտում: 600 աղջիկներ փակվեցին եկեղեցում: Թիւրքերը, ներս խօսեցին եկեղեցին, սարսափելի բռնաբարութիւններին ենթարկեցին նրանց և ապա սպանեցին: Արեւը հոսում էր տաճարի չէմբը:

«Սարսափելի զեպանութիւնների հիւպատոսարանները քննութիւն են կատարում: Թիւրք գլխորդներից մի քանիսը իրանք խոստովանվում են, որ նրանցից իւրաքանչիւրը 50 ական քրիստոնէայ կանայք են կոտորել: Զինուորները հայ քրիստոնէաների տները վրա կէրօսին էին ածում և վառում էին, այնպէս որ թշուառ գիւղացիները այրվում էին իրանց աղքատիկ դռները:

ՊԱՊԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ

Խաչակական լրագիրներում տպված է հետեւեալ տեղեկութիւնը. «Վատիկանի ուսուցչական Խղիջութիւնը մասնաւոր ունիւրութեան ընդունելով, պապը անց նրան, որ այժմեան թագաւորութեան վրա ինքն մեծ յոյսեր է դնում և հաւատացած է, որ բարեկամական յարաբերութիւններ կը պահպանվեն Ռուսաստանի և Վատիկանի մէջ:

«Ապա պապը յոյս յայտնեց, որ Ռուսաստանը չի զիջալի Հռոմի քահանայապետի սկսած դժուրին՝ այն է արեւելեան եկեղեցիները միացնել կաթոլիկ եկեղեցուն: Լոն XIII պապը աւելացրեց, որ ինքն թագաւորներին կուղարկի արեւելեան քրիստոնէաներին ուղարկած կոնգրակը, ինքնագիր նամակի հետ միասին:

«Արձակելով ուսուցչականի, պապը յայտնեց, թէ սուրբաւոր սիրով ընդունում է Հռոմի կոնֆէրէնցիայի վճիռները և որ օսմանեան կառավարութիւնը թոյլատրեց հայոց պատրիարք Ազարեանին Հռոմ գալ պապի հետ խորհրդակցելու համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԱՅԻՆ

Կ. Պոլսի, նոյեմբերի 10-ին
Այս օրերս կառավարութիւնը լրագիրներում տըպագրել տուեց պաշտօնական յայտարարութիւն մը, որով նոր դէպք է ձեռք կառնէ հայերուն դէմ, հրդեհներու պատճառ. համարելով դանձը. մինչդեռ Հաճնի վերջին չարաղէտ հրդեհը ամբողջով իրենց գործն է, ինչպէս և առաջինը, ինչպէս և վաղեմը՝ 1876 թվին: Իբր թէ զիւրութիւն մը տալու համար Հաճնի ժողովրդին, մաքսէ աղաւթը բերի ի Հաճն ներս մտած միջանի, նիւթեր, ութ ամիս ժամանակով, բայց ութ տարւան մէջ անգամ Հաճն հազիւ թէ ոտքի իլնայ:

Ահա այդ պաշտօնական յայտարարութիւնը. «Հայկալի կուսակալութիւնը ծանուցած է թէ անցեալ հոկտեմբեր 24-ին Պոլսի գիւղաքաղաքին շուկային մէջ զիւրեւան ժամը մի կէսին հրդեհ ծագելով այրած է շուկային մեծ մասը, տեղեւոյն Միւսթիլին տունը և Թէքէ մը: Հրդեհն մէկ քանի օր յետոյ նոյն շուկային ձեռք անցուած մասամբ թուրքերէն և մասամբ հայերէն գործիչներէ մը, որ կարգ մը անգամ ու չաւառի խօսքեր և սպանաւորութիւն կը պարունակէր, հասկցուած է թէ այդ հրդեհը հայերէն ձգած է եւս: Պաշտօնականները զրկուած են հոն հարկ եղած քննութիւնները կատարելու համար:

«Այդ, նկատելով որ այս օրերս հրձիգութեան նման ռիւթներ յաճախ կը պատահին և նկատելով որ կայսերական կառավարութեան նուիրական մէկ պարտականութիւնն է պահպանել պատուա-

ւոր անձերու կեանքը, ինչքն ու պատիւը, կայսերական իրաւոյ մը հրամայած է զրկել նոյն տեղը դատական պաշտօնեաներու յանձնախումբ մը ու ճարտար հարցաքննիչ դատաւոր մը որպէս զի, ինչպէս կըլլայ ուրիշ ոճադործներու նկատմամբ, այդ տեսակ գործերու հեղինակներուն նըկատմամբ ալ օրինական քննութիւններ կատարուելով օրինական տրամադրութեանց ենթարկուին: Կայսերական սոյն իրաւունքն համաձայն հարկ եղածը զրուած է նոյն կուսակալութեան:

«Ապա» այս առիթով հետեւեալ կը գրէ. «Կայսերական կառավարութիւնը ի վաղուց անտի նկատողութեան առնելով Անատոլի մէկ քանի քաղաքներու և գիւղաքաղաքներու մէջ ժամանակէ մը ի վեր պատահած հրդեհները, քննութիւններ կատարել կուտայ հաստատելու համար թէ այդ կարգի հրդեհներ թշնամութեան արդիւնք են թէ ոչ:

«Առեւտած տեղեկութեանց համաձայն հասկցւած է թէ հայ խաւարարներ հրձիգութեան համար ինչ ինչ նիւթեր ձեռք անցուցած ու հնարած են և թէ կայսերական երկիրներու ալ և ալ տեղերուն մէջ ժամանակէ մը ի վեր պատահած մեծ հրդեհներ անոնց կողմէ ձգուած են:

«Հայ ազգը բազում դարերէ ի վեր վայելած է օսմանեան կայսերական կառավարութեան բարիքներն ու չնորհները և բոլոր հպատակներու նման պահած է իր ազգային ու կրօնական ազատութիւնը և անտարակոյս պիտի դնահատէ այդ չնորհներուն ու բարիքներուն արժէքը, որով յայտնի կերել թէ այդ կարգի ռիւթներու հեղինակներն են նոյն ազգին պատկանող խաւարարը ոմանք, որոնց միտքերը խղճալիւրած ու թշնամութեամբ են թշնամական դասերով և զորս փոքր խմբակ մը կոչել արժանի է: Այդ կարգի վնասակար անձինք և ոչ մէկ կերպով կրնան խոսափել կայսերական կառավարութեան աշարջութենէն:»

ՆԱՄԱԿ ՊԱՐՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, նոյեմբերի 2-ին
Մինչև այժմ Արապատականի գործերը զեկաւարողը համարվում էր Արամեան զպրոցի հողաբաւձութիւնը: Սակայն վերջին ժամանակներս հողաբաւձութեան և առաջնորդարանի մէջ տեղի ունեցած տարբեր կարծիքները, հակառակ առաջնորդի ցանկութեան կայացրած վճիռները առիթ տուին եպիսկոպոսին մի վնասակար դիտաւորութեան ձգտելու, այն է ճանաչել հողաբաւձների իրաւունքը միայն զպրոցում, իսկ ազգային միւս հարցերը կարգադրելու համար կազմել տեղական քահանաներից մի ժողով, կօնսիստ օրիա աւանուր տալով նրանք ի հարկէ, կօնսիստօրիա կազմակերպել մի լոկ ձեռնադրութիւն է, որովհետև քահանայ անդամները ոչ միայն անընդունակ են Արապատականի պէս մի թեմի ազգային գործերը կարգադրելու, այլ և խեղճերը խօսել չը գիտեն, հէնց նոյն իսկ իրանք՝ քահանաները խոստովանվել են առաջնորդի առաջ, որ իրանք Հոսիստօրիա-մօնսիստօրիա չեն հասկանում, իսկ թէ սրբազանն ինչ որ ուղղում է, թող գրի և տալ իրանք ստորագրեն: Առաջնորդի ուղածն էլ հէնց այդ է: Այժմ պատուիրված է ուսումնարաններին, որ առանց ծննդական վկայականի աշակերտներ չընդունեն, իսկ այդ վկայական տալը՝ երեւակալ յաւ կօնսիստօրիան օրոյել է տասն և հինգ դրան վճարով: Ամսական 15 դրան ստացող արհեստագործ 15 դրան պէտք է վճարէ առաջնորդին, որ նրանց մի կտոր թուղթ ստանայ և իր օրդուն վարժարան տալ: Երեկ սա էլ կրթութիւնը տարածելու միջոցներից մէկն է...

Թաւրիզից մի օրվայ հեռաւորութեան վրա գըտնվում են երեք հայ գիւղեր՝ Մուշամբար 120 տուն, Ալլամուր 40 տուն և Սօհրու 7 տուն: Այս երեք գիւղերն էլ այժմ գուրկ են հովող քահանաներից, որոնց մեղքները առանց քահանային են թաղվում, նորածնները առանց միջնորդութեան մնում: Այդ գիւղը քահանաներից մէկին, մի գուհիկ ծերունու, չը գիտենք ինչու առաջնորդը չէ ուղղում իր մօտից հեռացնել, իսկ միւսին, առանց մի չամենաչինի պատճառի կարգադրով արեց, որից ստիպված խեղճը հաւաքեց իր մանրիկ երեխաներին և գնաց Ելմիւսին: Կարողութիւնսից արդարութիւն հայցելու: Այդ երեք գիւղացիները մի քանի անգամ դիմել են առաջնորդին՝ պահանջելով իրանց համար մի հովող քահանայ,

